

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Усп. Синяка

Му 9-Март синяк

Ки 1931

891.998  
9-83

ԱՀ.ԶՊՐՅԱՆ

# ՄԻ ԳԻՇԵՐ ԱՆՏԱՌՈՒՄ



891.995  
9-83

ՀՀ ՀԱՅԱՍՏԱՆ  
0 · 3 · 1

ԿԿԱՐՆԵՐ ԱՐԴԱՐԻԲՈՅԱՆԻ

ГА 32-1  
118

1.995

-83

1.995

Ա. ԶՈՐՅԱՆ

2011-05

# ՄԻ ԳԻՏԵՐ ԱՆՏԱՌՈՒՄ

Պ. Ա. Տ Ա Վ. Ա. Ծ Ք

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР




ՊԵՏԱՐԱՍ

1931

ՑԵՐԵՎԱՆ

13 APR 2013

8545



Պետհրատի տպարան  
Հրատարակ. № 1721  
Գլավ. № 6564 (ք.)  
Պատ. № 3629  
Տիր. 4.000



59607 - 66

## ՄԻ ԳԻಡԵՐ ԱՆՏԱՌՈՒՄ

Մեր կողմերում ոգոստոսը մոռի ամենալավ ժամանակն է։ Ինչքան մոռ, հաղարձ կա մեր անտառներում... Այն մի բացուտ—մեծ թե փոքր՝ լիբն ե մոռի թփերով։ Բայց ամենից շուտ հասնում է Բնձորա մոռը, վորովհետև տեղը շատ արեւոտ է։

Բնձորը, սակայն, մեր գյուղից բավական հեռու յե։ Այնտեղից մոռ բերելու համար մերոնք յերեկոյան գնում են, գիշերը մնում Բնձորա անտառում, վոր առավոտը՝ արևածագից առաջ, սկըսեն մոռի բաղը, վորպեսզի կեսորին վերադառնան։

Մի անգամ ահա ընկերներս տարան ինձ Բնձոր, վոր գիշերը մնանք և առավոտը վաղ մոռ բաղենք։

Յես շատ անգամ եյի յեղել անտառում, բայց տուածին անգամն եր, վոր պիտի գիշերեյի այնտեղ։

Յես առհասարակ անտառ շատ եմ սիրում։ Միշում եմ նրա զովքը, նրա խշոցը, նրա փոթորիկը և նրա վեհ լոռոթյունը, վոչ մի տեղ, գուցե, մարդ



այնքան ախորժակավ չի ուտում,  
այնքան ազատ չի չնշում, փորբան  
անտառում:

Հինգ հոգի ելինը, հինգս ել զլող-  
ոցի աշակերտներ, մի դասարա-  
նից: Ամենից հասակովը մեր մեջ  
Վարդանանց Վանին եր, վոր միշտ  
զիշերակաց մոռի յեր գնում հոր  
կամ ուրիշ մարդկանց հետ - այն-  
պես վոր լավ ծանոթ եր տեղին.  
զիտեր փորտեղ պիտի զիշերել, փոր-  
տեղ ե լավ մոռը:

Յերբ տեղ հասանը՝ մութն ըն-  
կավ. իսկ յերբ հաց կերանը՝ վանին ասաց.  
— Հիմի մեռելի պես կընենը՝ հնքան բեղարած  
ենք:

Վրաներս զցելու համար վերցրել ելինը ամեն  
մինս մի բան՝ հին պինջակ, շինել, մեշոկ: Փնտուե-  
ցինը և բոխիների տակ գտանք մի հարթ՝ կանա-  
չապատ տեղ ու, շորներիս կեսը տակներս, կեսը  
վրաներս քցելով՝ պառկեցինը:

Թեհե վանին գուշակեց, թե մեռելի պես կընենը,  
բայց իմ ըստնը բոլորովին չտարավ:

Հնկերներս, ճիշտ ե, ընեցին և ամենից շուտ ինըը



վոր անտառում ամեն տեսակ գազան-  
ներ են լինում ու վախից՝ ականջս ձե-  
նի ելի պահում:

Խոնավ եր և շատ զով: Ծառերի կա-  
տարներով քամի յեր անցնում  
ու անտառն ամբողջ սփսվում,  
փսվում եր. թվում եր՝ տերե-  
ները մեկը մյուսին ինչ-վոր  
գաղտնիք ելին հայտնում.  
մեկը կարծիս տառմ եր՝  
«ասա, ասա», մյուսը զգու-  
շացնում եր՝ «սը՞ս, սը՞ս...  
կլսե՞ն, կլսե՞ն»... ու բոլորը  
կը կնում ելին միասին՝  
«սը՞ը»... ու մեկ ել լուսմ



Եյին հանկարծ. թվում եր՝ ականջեն դնում ինչ-վոր  
ձայների, սպառում են ինչ-վոր կարգաղբության,  
վոր հետո՝ ավելի յեռանդով սկսեն իրենց գործը:

Յերբ անտառը լուսմ եր՝ տարորինակ ձայներ  
եյին լսվում. մի տեղ քնած թռչունի մեկը ճշում  
եր հանկարծ, թևերը թափահարում ու հանկարծ ել  
լուսմ. մի ուրիշ կողմից լսվում եր մոնչոց կամ  
խորդյուն... հետո ինչ-վոր ծանր հառաչանք ու խուլ  
տնքոց:

Այս բոլորը՝ վոչինչ,  
մինչեւ անգամ հետաքրքր-  
քրական եր, բայց ինձ վա-  
խեցրեց հանկարծ մի ու-  
րիշ ձայն. մեկ ել, չգիտեմ  
անտառի վոր կողմից, մի  
բառաչ լսվեց և ապա ան-  
տառը լցվեց մի տարորի-  
նակ ճոճոցով. թվաց՝ ծա-  
ռերը, թափած չոր ցա-  
խերը կոտրտվում են ինչ-  
վոր մեկի վտների տակ և  
անտառը լցնում ճարճա-  
տյունով. թվում եր՝ մի



ահոելի հսկա յեւ վազում անտառով և ձանապարհին  
ջարդում ամեն ինչ...

Յես պառկած տեղս կուչ յեկա վախից, բնադ-  
դաբար մոտեցա ընկերներիս ու զարթեցրի վա-  
նուն.

— Վանի, Վանի, ևս ով եւ վազում անտառով:  
Նա վեր կացավ ու քնաթաթախ ականջ դրեց.  
— Պախրա կըլի ելի, — ասաց անտարբեր ու  
բնեց նորից:

Հազիվ այդ ճոճոցը լոել եր, հանկարծ յերե-  
խայի լացի ձայն լսվեց.

— Ուշ, ուշ, ուշ...  
«Ո՞վ եւ տեսնես այդ յերեխային բերել այստեղ,  
թե մոռացել են՝ թողել անտեղ»:

Մինչ մտածում եյի, յերեխայի  
լացը կըկնվեց նորից, այս անգամ  
ավելի սաստիկ ու աղեկտուր: Յեկ  
հանկարծ լացն ընդհատվեց ու  
լսվեց մի բարձր բըրիջ.

— Համամամ...  
Սարսափ անցավ մարմնովս—  
այնքան տհարկու յեր այդ ծիծա-  
զր առաջվա սրտապատառ լացից  
հետո:

Վախից հրեցի Վանուն:





— Վանի, Վանի, վեր հլա, են ովե ծիծաղում...  
Վանին քնաթաթախ զլուխը բարձրացրեց նորից.

— Ո՞վ ե, Վանի, յերեխամ թե մարդ...  
Վանին քմծիծաղ տվեց.

— Զե՛ մի: Քոռ բու ելի, — ասաց գարձյալ հանգիստ ու անտարբեր...

— Ի՞նչ գիտես:

— Խի չգիտեմ: Ամեն գիշեր եղպես ե անում ելի...

— Համ լաց ե լինում, համ ծիծաղում...

— Բա, իհարկե: Քնի: Քնի...

Ասաց ու շուռ յեկավ մյուս կողքի վրա:  
Քիչ հետո, մեր գլխի վրայով, ծառերի միջով  
մի թևափոր անցավ շատ ցածից ու, փոքր անց, նրա  
գնացած կողմը լսվեց մի քնած թռչնի վախեցած ճիշ  
ու ծղրտոց, ապա այեն ինչ լռեց:

Յեկ մի առ ժամանակ այնպիսի լոռություն եր,  
վոր սրտիս ձայնը լսում եյի:

Այդ ել անցավ. հետո, չգիտեմ վորքան եյի բը-  
նել, մեկ ել աչքերս բաց արի թեթի վոտների փըթ-  
փըթոցից. ինձ թվաց, թե մեկը կանգ առավ մեր  
գլխավերե, ծառերի յետեւ:

Յես աչքերս կրկին փակեցի, վոր բան չտեսնեմ,  
բայց միաժամանակ ուզում եյի իմանալ, թե ով  
կանդ առավ...

Վերջապես, յերբ աչքերս նորից բացի՝ ուղիղ  
իմ զիմաց մի քսան բայլ հեռու նկատեցի մի զույգ  
պլազլուն աչքեր...

Իմ բախտից լույսը բացվում եր. ավելի ուշա-  
գիր նայելով՝ տեսաբերանը բաց, լեզուն կախ բցած  
մի մոխրազույն շուն, վոր կանգնել նայում եր մեր  
կողմը:

Ֆրան տեսնելով որտապնդվեցի, նստեցի պառ-  
կած տեղս ու կանչեցի.

— Քուչի, քուչի, քուչի...

Շունը մոտ չեկավ. յեզուն իրան բաշեց, մեջքն  
ուոցրեց, վզի մազերը ցցեց ու նայեց անհանգիստ:

Ինձ թվաց՝ վախեցած շուն ե, քաշվում ե մոտե-  
նալ, այդ պատճառով ձայնիս առանձին սիրալիրու-  
թյուն տվի.

— Քուչի, քուչի, քուչի...

Շունն ականջները ցցած, աչքերը փայլեցն ելով  
շարունակում եր նայել:

— Արի՛, արի՛, — կանչեցի բարձր:

Իմ ձայնից Վանին զարթնեց:

— Եղ ում ես կանչում, — հարցրեց նստելով.

— Հրեն մի շուն ե յեկել, — ասի ուրախուրախ  
շան կողմը մատնացույց անելով, — վոնց վոր Բազո-  
անց շունն ըլի, չե՞:

Վանին նայեց ու հանկարծ տեղից ծուլ յեղավ:

— Տղերը, զելը, — զոռաց նա, — վեր կացեք... բա-  
րեր վերցրեք...

Տղաները մի ակնթարթում վեր թռան, բար ու

փայտ վերցրին և «հայ, հույ» անելով, Վանու առաջնորդությամբ, ընկանգայլի յետելից:

Յես մնացի մենակ ու ամոֆահար: Ամաչեցի, վոր չկարողացա գայլը տարբերել շնից և այժմ, յերբ ընկերներս հալածում եյին այդ գայլին՝ յես վախենում եյինրանից ու, ականջս ձայնի սպասում, թե ինչ ե լինելու:

Տղաների «հայ-հույ» գալիս եր հեռվից, անտառի խորքից ու թվում եր, թե նրանք շատ հեռու յեն: Յես վախենում եյին հանկարծ գայլը պտավի ու նորից գու ինձ մոտ, իսկ ընկերներս խոր տեղեր ընկնեն և ինձ կորցնեն: Ու քանի նրանց ձայնը լսվում եր, յես փոքրիկ հույս ունեյի, թե կդան... Բայց մեկ ել՝ հանկարծ ձայները կտրվեցին բոլորովին:

Ուրեմն շատ հեռացան...

Ուրեմն ինձ ել չեն գտնի...

Հուսահատությունից սկսեցի բարձրածայն կանչել.

— Եհեյ, Վանի, Եհեյ...

Իմ փոքրիկ ձայնը ոռումքի պես զրմբում եր անտառի խորքում և արձագանքներով կրկնվում.

Հեե՛հ...

Իսկ աղաների կողմից վոչ մի ձայն:

Իմ հուսահատությունն ու վախը կրկնապատկվեցին: Սկսեցի կանչել ավելի սրտապատառ ձայնով.

— Հեյ, Վանի, Եհեյ...

Վոչ մի պատասխան:

Տեսնելով ձայն չկալաց յեղաւ:

Այդ ժամանակ հանկարծ ընկերներս, Վանու առաջնորդությամբ, ծիծաղելով դուրս յեկան ծառերի յետելից:

— Ամոթ չի, տո, լաց ես ըլնում,—ասաց Վանին: — Հերիք չի գելը շան տեղ ես դրել, հիմի յել լաց ես ըլնում...

Ու սկսեցին ծաղրել, ծիծաղել:

Յես թեքով աշքերս սրբեցի և ինքս ել, ուրախությունից, նրանց հետ ծիծաղեցի իմ վախի վրա: Բայց վորովհետև լուսացել եր արդեն՝ ել չմնացինք այդտեղ. ամանները վերցրած գնացինք մոռուտ...

Այդ որվանից շատ տարիներ են անցել, բայց յես յերեք չեմ մոռանում այդ գիշերը, վորովհետև այդ մի գիշերվա մեջ յես այնքան բան սովորեցի... Յես իմացա, որինակ, վոր ընած ժամանակ փոքրիկ թռչունների վրա յեն հարձակվում գիշատիչ թռչուններ և տեղն ու տեղը ուտում, վոր բուն յերեխային ման լաց ե լինում ու մեծ մարդու պես ըըրըլջում. վոր գայլը նման ե շանը, բայց փայլուն, պսպղուն աչքեր ունի, վոր նա այնքան ել յերկյուղավի չի, յեթե ընկերովի հարձակվեն նրա վրա. ու գայլից վո՞չ թե պիտի վախենալ, այլ վախեցնել...





ФКЦ 304 (3/4 в)

488.



БИБЛИОТЕКА  
Института  
Природы и Ценности  
Министерства Науки  
СССР

1 ★ 9 ★ 3 ★ 1

И. В. /  
907 0 904

ФКЦ 304 (3/4 в)

Т

8545